

## **ՎՃՌԱՔԵԿ ԴՎՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Ապրիլի 2-ին տեղի է ունեցել ՀՀ Վճռաքեկ դատարանի որոշումների ժողովածուի առաջին հատորի շնորհանդեսը: Ժողովածուն ընդգրկում է սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքում Հայաստանի Վճռաքեկ դատարանին վերապահված սահմանադրական առաքելության շրջանակում կայացված որոշումները 2007 թվականի սեպտեմբերից մինչև դեկտեմբեր: Ժողովածուի ֆինանսավորմանն աջակցել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագիրը:

Շնորհանդեսին հրավիրված էին մասնակցելու ներկայացուցիչներ ՀՀ դատական համակարգից, պետական մարմիններից և միջազգային կազմակերպություններից, հյուրեր արտասահմանից, ինչպես նաև փաստաբաններ, իրավաբան-դասախոսներ և այլոք:

Ինչպես մեզ տված հարցազրույցում նշեց ՀՀ Վճռաքեկ դատարանի նախագահի խորհրդական Արսեն Մկրտչյանը «Ժողովածուն կազմելիս հիմնական խնդիրը Վճռաքեկ դատարանի որոշումները օգտագործողների համար հնարավորինս մատչելի դարձնելն է: Այդ նպատակով կազմվեց այնպիսի ցանկ, որը այն հիմնական հարցուպատասխանների ուղեցույցն է, որոնց իր որոշումներում անդրադարձել է Վճռաքեկ դատարանը: Կարծում եմ, որ Ցանկը հնարավորություն կտա նաև օգտագործողներին որոշելու այն հիմնական չափանիշները, որոնցով ղեկավարվում է Վճռաքեկ դատարանը գործերը վարույթ ընդունելու ժամանակ: Հուսով եմ, որ վճռաքեկ դատարանի որոշումների ժողովածուն կդառնա օգտագործողի սեղանի գիրքը և օգտակար կլինի այն իրավական հարցերի պատասխանները գտնելիս, որոնք կառաջանան օրենքների կիրառման ընթացքում»: